

Հաստատված է

<<ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 005 նիստով

Խորհրդի նախագահ

Բ. Սաստրյան

<<30>> հունվարի 2013թ.

«Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ

գրավադրված գույքի հրապարակային աճուրդով վաճառելու կանոնակարգ

1. Սույն կարգի համաձայն իրականացվում են հրապարակային սակարկությունների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների աճուրդով իրացումը:
2. Գրավ դրված գույքի իրացումը կատարվում է բաց հրապարակային սակարկություններով վաճառելու միջոցով: Սակարկություններն անցկացվում են աճուրդի ձևով: Աճուրդն անցկացվում է հոլանդական եղանակով՝ մեկնարկային գնի նվազեցմամբ:
3. Հոլանդական աճուրդի դեպքում աճուրդավարի կողմից մեկնարկային գինն իջեցվում է մեկնարկային գնի 10 տոկոսի չափով, մինչև մասնակիցներից մեկը բարձրացնելով իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լուրը ձեռքբերելու մասին և աճուրդավարի կողմից անմիջապես համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Հոլանդական աճուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել մեկնարկային գնի 80 տոկոսից:
4. Սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները: Սակարկություններին չեն կարող մասնակցել սակարկությունների կազմակերպիչը, իրավաբանական անձ համարվող կազմակերպչի հիմնադիրները (մասնակիցները), կազմակերպչի աշխատակիցները, իսկ մրցույթների դեպքում՝ նաև մրցութային հանձնաժողովի անդամները, աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը, այն անձինք, որանք սակարկություններով վաճառվող Գրավի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:
5. Աճուրդը կազմակերպում և անցկացնում է «Գառնի Իվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն կամ վերջինիս կողմից լիազորված անձը, այսուհետև՝ Կազմակերպիչ: Աճուրդը սկսվում է ժամը 11.00 և տևում է մինչև աճուրդի հանված լուտի վաճառքը: Աճուրդի անցկացումից առնվազն 15 օր առաջ զանգվածային լրատվության միջոցով կատարվում է աճուրդի մասին հրապարակային ծանուցում: Աճուրդին, աճուրդի կանոնակարգով նախատեսված կարգով, կարող են մասնակից ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը (այսուհետև՝ մասնակից չհամարվող անձինք):
6. Կազմակերպիչը մամուլում հաղորդակցություն (ծանուցում) է հրապարակում կայանալիք աճուրդի մասին, որտեղ նշված են տեղեկություններ՝
 - ա) աճուրդի կայացման տարին, ամսաթիվը և ժամը,
 - բ) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը),
 - գ) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն),
 - դ) աճուրդի պայմանները, այդ թվում՝ իրացվող գրավի անվանումը, վիճակը, մեկնարկային գինը, ինչպես նաև էական այլ պայմաններ,
 - ե) սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետը,
 - զ) աճուրդի ձևը և անցկացման կարգը,
 - է) աճուրդում հաղթողին որոշելու կարգը,
 - ը) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
 - թ) գրավը ուսումնասիրելու կարգը, ամսաթիվը, ժամանակը և վայրը,
 - ժ) աճուրդի կանոնակարգին (պատճենը տրամադրվում է անվճար) ծանոթանալու վայրը:
7. Աճուրդի անցկացման մասին հաղորդագրությունը (ծանուցում) հրապարակվում է մամուլում աճուրդի բացումից առնվազն 15 օր առաջ նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող թերթում և/կամ էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցով:
8. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են ըստ ՀՀ «Հրապարակային սակարկության օրենքի» հոդված 9-ի:
9. Աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնած անձինք աճուրդի անցկացման հաղորդագրությունը մամուլում հրապարակելու պահից մինչև աճուրդի անցկացման նախորդ օրը ժամը 16:00-ը մուծում են նախավճար աճուրդի ներկայացված գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, եթե Կազմակերպիչը իր հրամանով այլ բան չի սահմանել: Նախավճարը մուծվում է «Գառնի Իվեստ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի հաշվարկային հաշվին մուտքագրվելու միջոցով:
10. Նախավճարը կատարած անձին Կազմակերպիչը տրամադրում է աճուրդի մասնակցի վկայական, որտեղ նշված է Կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

11. Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար սահմանվում է մուքի վճար 10.000 տասը հազար ՀՀ դրամ: Մուտքի վճարը մուծվում է «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հաշվարկային հաշվին մուտքագրելու միջոցով:
12. Աճուրդի մասնակիցներին վկայականներ տրամադրելը դադարեցվում է աճուրդի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ:
13. Կազմակերպիչն աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա գետեղում է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:
14. Աճուրդի անցկացման մասին որոշումը (հրամանը) Կազմակերպիչը աճուրդը անցկացնելու օրվանից առնվազն 10 օր առաջ ուղարկում է գրավատուին (Վարկատուին):
15. Կազմակերպիչը պարտավոր է Գրավը ուսումնասիրել ցանկացողներին տրամադրել այդ Գրավի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ցուցադրել լուսանկարները (եթե այդպիսիք կան), իսկ դիմողի ցանկության դեպքում՝ ուղեկցել վերջինիս Գրավի գտնվելու վայրը և հնարավորության դեպքում (տվյալ պահին սեփականատերերի համաձայնությամբ) ցուցադրել այն տեղում:
16. Գրավի ուսումնասիրման համար Կազմակերպիչը հատկացնում է պատշաճ ժամանակ:
17. Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված փաստաթղթերը:
18. Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք գրավի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, Գրավի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը՝ այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:
19. Աճուրդի արժույթը ՀՀ դրամն է:
20. Գրավի վաճառից հետո աճուրդի հաղթողը և Կազմակերպիչը աճուրդի անցկացման օրը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, իսկ տվյալ Գրավի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:
21. Աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են՝
 - ա) աճուրդի կայացման տարին, ամիսը, վայրը և ժամանակը,
 - բ) Գրավի անվանումը, վիճակը (արտադրության տարին, ֆիզիկական մաշվածության աստիճանը և այլն),
 - գ) Գրավի մեկնարկային գինը,
 - դ) Կազմակերպչի (Ընկերության) անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,
 - ե) հաղթող ճանաչված մասնակցի անունը անվանումը և բնակության (գտնվելու) վայրը,
 - զ) Գրավի գնման գինը:
22. Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:
23. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցն աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից 3 բանկային օրվա ընթացքում պարտավոր է վճարել Գրավի գնման գինը՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Աճուրդի հաղթողի կողմից Գրավի գնման գինը մուծելուց հետո եռօրյա ժամկետում Կազմակերպիչը նրա հետ կնքում է առքուվաճառքի պայմանագիր: Առքուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման: Եթե աճուրդում վաճառված գրավի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա առքուվաճառքի պայմանագիրը և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը հիմք են հանդիսանում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար:
24. Նախավճարը և Գրավի գնման գինը վճարվում են «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հաշվարկային հաշվին մուտքագրվելու միջոցով:
25. Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, կամ աճուրդի մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից 3 (երեք) բանկային օրվա ընթացքում չի վճարում Գրավի գնման գինը, ապա վերջինիս կողմից մուծված նախավճարը ետ չի վերադարձվում:
26. Եթե Կազմակերպիչն է հրաժարվում ստորագրել աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, ապա նա պարտավոր է վերադարձնել նախավճարի կրկնապատիկը:

27. Այն դեպքում, երբ աճուրդի մասին հրապարակային ծանուցման հիման վրա մինչև հայտարարությամբ սահմանված ժամկետի ավարտը դիմում-հայտեր չեն ներկայացվում աճուրդին մասնակցելու համար, ապա աճուրդի կազմակերպչի կողմից նշանակված աճուրդը լրացուցիչ հրամանով համարվում է չկայացած, որից հետո կարող է նշանակվել նոր աճուրդ, նույն սկզբունքներով:
28. Աճուրդը համարվում է չկայացած ըստ ՀՀ «Հրապարակային սակարկության օրենքի» հոդված 15-ի:
29. Աճուրդից հրաժարվելը կատարվում է ըստ ՀՀ «Հրապարակային սակարկության օրենքի» հոդված 12-ի:
30. Աճուրդը համարվում է անվավեր ըստ ՀՀ «Հրապարակային սակարկության օրենքի» հոդված 16-ի:
31. Սույն կարգը հաստատվում է Ընկերության Խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից: Կարգում լրացումները և փոփոխությունները կատարվում են Ընկերության Խորհրդի կողմից: Սույն կարգի ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 14.05.2007թ. Խորհրդի թիվ 9 նիստով հաստատված «գրավադրված գույքի հրապարակային աճուրդով վաճառելու կանոնակարգ»-ը: